ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՔԻ ԸՄԲՌՆՈՒՄԸ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՄԵՋ

Ռիմա Միրումյան
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Ազգի հոգևոր մշակույթի (ժողովրդական բանահյուսությունից մինչև փիլիսոփայություն և գիտություն) ձևավորումը հարաբերակցվում է ազգային պատմափիլիսոփայության առաջացմանն ու զարգացմանը: Համապատասխանաբար, ազգի հոգևոր մշակույթի (և անգամ նրա առանձին ոլորտների) ձևավորման ընթացքի հետազոտումը հնարավորություն է ընձեռում բացահայտել ազգի ներքին, հոգևոր կյանքի աստիճանական ծավալման սահմանները, դրանով իսկ նաև ազգի պատմափիլիսոփայական գիտակցության հիմքն ու միտվածությունը: Լինելով ազգային մշակույթի աշխարհայացքային բնութագրումը՝ յուրաքանչյուր ազգի պատմափիլիսոփայությունը նույն ազգի ինքնաճանաչման, այն է՝ սեփական ստեղծագործական, հոգևոր ներունակության գիտակցման արտահայտությունն է: Ազգի պատմա-փիլիսոփայությունը բովանդակում է ազգային մշակույթի ներքին խորհուրդը՝ ազգի գոյության բացարձակ (իդեալական) իմաստի, հետևապես՝ նաև նրա պատմական հեռանկարի սահմանումը[1]:

Հայ պատմափիլիսոփայությունը առաջանում է որպես ազգի ինքնագիտակցության ձև, որի սկզբնավորումը դիտելի է դեռևս հայերի դիցաբանական մտածողության մեջ: Դիցաբանական պատմականությանը

---

[1] Տե՛ս **Միրումյան Ռ.**, Սեն Արևշատյանի պատմափիլիսոփայական հայեցակարգի մեթոդաբանական անկյունները // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Պրակ հինգերորդ, Եր., 2003, էջ 11:

հատուկ է «ՄԵՆՔ» (ՀԱՅԵՐՍ) բևեռի շեշտադրումը, ինչից էլ սկիզբ է առնում հին հայերի՝ իրենց ինքնատիպության ըմբռնումը։

Դեռևս հայ հերոսավեպում ձևավորվում են հայերին ներհատուկ ազատասիրության և արժանի գոյության գրավականի՝ անկախության ձգտման գաղափարները, որոնք, կազմելով հայերի պատմական հիշողության հիմքը՝ հետագայում դառնում են հայ պատմափիլիսոփայական հայեցակարգերի առանցքը[1]։

Հայ պատմափիլիսոփայական մտքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն XII-XIV դարերը։ Այդ ժամանակաշրջանում գրված որոշ աշխատություններ բնութագրելի են որպես ռեֆլեքսիա ազգի առկա կեցության նկատմամբ (իրավաքաղաքական կտրվածքով), ինչպես նաև ազգի անցյալի նկատմամբ (պատմամշակութային կտրվածքով)։

Մխիթար Գոշի «Դատաստանագիրք հայոց» (XII դ.) աշխատությունը ռեֆլեքսիա է դարաշրջանի՝ Բագրատունյաց թագավորության անկումից հետո ազատությունն ու ինքնիշխանությունը կորցրած և առանձին մասերի բաժանված Հայաստանում տիրող սոցիակական և քաղաքական իրավիճակի նկատմամբ։ Օրինաչափական է թվում այն կարծիքը, ըստ որի՝ մի ազգի իրավական մշակույթի զարգացումը զուգընթաց է նույն ազգի հոգեմտավոր զարգացնանը. «որքան բարձր է և ընդարձակ ազգի ընդհանուր զարգացումն, նոյնքան համեմատաբար լիակատար է և՛ նորա իրաւաբանական զարգացումն»։ Սակայն, ընդունելի է նաև այն տեսակետը, որի համաձայն՝ իրավական մշակույթի զարգացումը մեծապես նպաստում է «ազգի ընդհանուր զարգացման, պետութեան կանոնաւոր և նպատակայարմար կազմակերպութեան, և մանավանդ նորա օրէնսդրական գործունէութեան»[2]։

Մյուս կողմից, իրավական մշակույթի զարգացման վրա ներգործում է ազգի և ժամանակի պահանջմունքներին համապատասխանող պետական օրենսդրությունը։ Եվ, փոխադարձաբար, երբ բարձր է մի

---

[1] **Միրումյան Ռ.**, Պատմափիլիսոփայական հայեցակարգերը 19 դարի հայ փիլիսոփայության մեջ. Մեթոդաբանական վերլուծություն,Եր., 2003, էջ 36։

[2] **Բաստամեանց Վ.**, Դատաստանագիրք Մխիթար Գոշի. Իրավաբանական հետազօտութիւն // "Փորձ",1879, n 6, էջ 65։

ազգի իրավական մշակույթը, այդ ազգը կարող է «խելացի կերպով և մեծ օգտով վայելել ազատամիտ օրէնքներ, աւելի ընդարձակ ինքնավարութիւն,և իւր կեակքի նոր երևոյթների հետ միասին նա պահանջում է և նոր օրէնքներ» [1]:

Նշվածի լույսի ներքո Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» բնութագրելի է որպես ազգի միավորման և հոգևոր զարգացման խթանիչ, որը պետք է վերածներ ազգային ինքնագիտակցությունը և լիներ ազգային պետականության վերահաստատման գրավական: Այս կտրվածքով Մխիթար Գոշի հայտնի աշխատությունը բնութագրելի է որպես պատմափիլիսոփայական միտվածություն ունեցող աշխատություն, քանզի դրանում ներկայացվում է ազգի ապագայի նախագիծը:

Մխիթար Գոշի փիլիսոփայապատմական աշխարհայացքում դիտելի են համակարգաստեղծ երեք հետևյալ գաղափարադրույթները.

1.Մարդուն ներհատուկ է արդարության ձգտումը, ինչը արձանագրվել է դեռևս անտիկ մտածողության ծնունդ հանդիսացող Բնական Օրենքի, Մովսեսի Օրենքի ու Քրիստոնեական Օրենքի մեջ:

2. Օրենքի քրիստոնեական ըմբռնումը Բնական Օրենքի և Մովսեսի Օրենքի համադրման, լրացման ու կատարելագործման արդյունք է: Այն հաստատում է մարդու մեջ ազատ կամքի առկայությունը: Հենց մարդու ազատ կամքն է հնարավոր դարձնում մարդու /հասարակության/ կենսագործունեության մեջ Սիրո վսեմ ու համապարփակ գաղափարի կենսագործումը. «Ու թեև Օրենքն ու Ավետարանը մոռացված բնական օրենքն են հիշեցնում, սակայն անձնական կամքը չեն բացառում՝ նախնիների ասելով. «Սիրիր ընկերոջդ՝ ինչպես քո անձը», քանզի մարդու սերն իր անձի նկատմամբ բնական է: Եվ երկրորդն (Ավետարանը) առավել քան առաջինը, կամքին է թողնում աշակերտելն ու այլևայլ առաքինություններ, որոնցով մեր մեջ հաստատվում է ամենքի նկատմամբ արդարությամբ վարվելը, որի համար էլ Ավետարանն սկզբից գրավոր չավանդվեց... Քրիստոսը

[1] Նույն տեղում, էջ 66.

եկավ կատարյալ (*հավերժական*-Ռ.Մ.) օրենքները կատարյալների (*հոգով ապրողների*- Ռ.Մ.) մեջ հաստատելու և չկամեցավ անկատարների (*մարմնով ապրողների*-Ռ.Մ.) նման գրավոր (օրենք) ավանդել»[1]: Ընդ որում Քրիստոնեական Օրենքի կատարելությունը դրա հավերժության վկայագիրն ու գրավականն է:

3. Ի տարբերություն գրավոր (մարդկային) օրենքի՝ Քրիստոնեական (աստվածային) օրենքը հավերժական ու անփոփոխ է: Այդ իսկ պատճառով այն կարող է և պետք է դիտվի որպես արդարացի դատավճիռների կայացման հիմք ու գրավական:

«Դատաստանագիրք Հայոց» աշխատանքի ստեղծումը Մխիթար Գոշը բացատրում է մի շարք հանգամանքներով, որոնք, ըստ էության, ունեն մեկ աղբյուր՝ մարդու/հասարակության/ ազգի հոգեբարոյական անկումը».., քանի որ մեր մեջ նվազեց հմտությունը, և ժամանակների, ազգերի ու աշխարհների փոփոխությունները ըստ իրադարձությունների ենք քննում, այլ ոչ թե (Մովսեսի) Օրենքների, Մարգարեների և Ավետարանի անփոփոխ (հիմքի վրայ)..., քանի որ այժմ Սուրբ Հոգին չի ներգործում այնպես, ինչպես ժամանակին.., որպեսզի (հավատացյալները) օրենսգիրք չլինելու պատճառով չգնան այլադավաններին դիմելու... արարելով մարդուն իր նմանությամբ՝ Աստված նրա մեջ դրեց հոգին, որը օր օրի զարգանում էր: Սակայն երբ մարդը ընկավ մեղքի մեջ, Աստված ասած. «Չմնա իմ հոգին մարդու մեջ, քանի որ նա մարմին է»: Դրա համար եկավ Քրիստոս և վերադարձրեց հոգին ու մարդկանց տվեց հոգևոր օրենսգիրք, այսինքն՝ Ավետարանն ու կանոնները՝ գիտենալով, որ մարմնավորների մեջ մարմնավոր դատարան կլինի: Եվ քանի որ մենք նորից մարմնին վերադարձանք, ուստի անհրաժեշտ է որ օգտվենք գրավոր դատաստանագրքից»[2]: «Դատաստանագրքի» նշանակությունը միջնադարյան հայ կրոնական մտածողը՝ ինքը, հետևյալ կերպ է սահմանում. «Դատաստանագիրքը կանոնադրական

---

[1] **Գոշ Մխիթար**, Դատաստանագիրք հայոց //**Ավագյան Ռ.**, Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ. ա. 9 դ.մ.թ.ա. 19դ.), հ.1, Եր., 2001, էջ 361:

[2] Նույն տեղում, էջ 363, 364

նշանակություն ունի, ուստի պարտավոր ենք ներդաշնակել նրան (Աստվածաշնչային կանոնների) հետ, որպեսզի պարզ դառնա նրանց ընդհանրությունը»[1]: Այս սահմանումը Մխիթար Գոշը մեկնաբանում է միջնադարյան քրիստոնեական աշխարհըմբռնման համատեքստում. «... կանոնները հոգու, և հոգին՝ մարմնի ուղղիչն է, ու թեև միմյանցից բաժանված են, սակայն շատ բաներում միասնական են: Այսպես և հոգին ու մարմինը. բնույթով երկու անխառն էություն լինելով՝ միմյանց հետ միավորվելով, դառնում են մի և հաճախ գործում են միասնական մի կամքով: Այս պատճառով էլ, թեև լինում է, որ մի կանոնով են առաջնորդվում, սակայն միմյանց չեն բացառում: Ինչպես իրերի հետազոտումը, նույնպես և դատարանի վարումն է վերապահվում հմտագույներին: Ինչպես այնտեղ կա պատիժ և ահաբեկչություն հանցագործների համար, այնպես էլ այստեղ»[2]: «Դատաստանագրքի» նշանակալիությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այն, ինչպես և Ս. Գիրքը, կոչված է ազատելու մարդկանց մեղքից, խափանելու չարը ու նրանց կյանքում հաստատելու Սերը, Լույսը, Հավատը: Մխիթար Գոշի հաստատմամբ՝ իր աշխատության մեջ ձևակերպված օրենքներին հետևելը անչափ կարևոր է հասարակական կյանքում ներդաշնակություն ապահովելու համար, քանզի «բոլոր կռիվները և ամբոխային խռովությունները սրանց բացակայության հետևանքն են, և հաստատվելով եկեղեցում՝ խաղաղության և բազում բարեկարգության հիմք կհանդիսանան, ինչը եկեղեցուն տրված աստվածային շնորհներից է թէ՛ հնում, թէ՛ այժմ»[3]:

Նշվածի լույսի ներքո օրինաչափական է «Դատաստանագրքի» ստեղծման համար հայ կրոնական մտածողի կողմից օգտագործված աղբյուրների ընտրությունը: Ինչպես նշում է Մխիթար Գոշը՝ ինքը, իր աշխատանքի համար նա գլխավորապես օգտագործել է հեթանոսական շրջանում ձևավորված բնական օրենքները

---

[1] Նույն տեղում, էջ 365:
[2] Նույն տեղում, էջ365, 366:
[3] Նույն տեղում, էջ 366:

(ավանդույթները) և քրիստոնյա ժողովուրդների կողմից օգտագործվող կանոնները։ Ընդ որում, բոլոր փոխառված նյութերը պետք է համապասասխանեին հայ ազգիկենասական պահանջներին ու «խմբագրվեին» Ավետարանի ճշմարտությունների լույսի ներքո։

«Դատաստանագրքի» առանցքային գաղափարը Հայաստանի ինքնիշխանության վերահաստատումն է։ Ըստ էության՝ Մխիթար Գոշի աշխատությունում ամփոփված գաղափարները դիտելի են որպես հայ ազգային պետության կենսագործունեության ամբողջական մի «ծրագիր» ազգային պետականության չգոյության պայմաններում։ Այս համատեքստում ուշագրավ է իր հնարավոր քննադատներին ուղղված Մխիթար Գոշի պատասխանը. «Ում վիճակվում է ընթերցել (այս) օրենսդրությունը՝ ամենատարբեր ձևերով ծաղրում են՝ մեզ նմանեցնելով նրանց, որոնք թագավորություն և բազում հաճելի բաներ են երազում, բայց արթնանալով՝ այդ ամենից զուրկ և դատարկաձեռն վիճակում են հայտնվում։ Բայց թող գիտենան, որ անտեղյակ չեմ, որ ամենայն երկրավոր թագավորություն անցավոր ու փոփոխական է, առավել ևս մեր թագավորությունը եղավ, քանզի անցյալը (թագավորությունը) մեջտեղում (այժմ) չկա, ներկայումս չունենք, և ապագայում էլ չենք ունենա, բայց ձևակերպելով իմ իղձս կատարում և (օրենսդրական) առաջարկությունս ջանում եմ ամբողջական պահել։ Սրա համար թող մեզ ներեն իրատեսները, որովհետև պատրաստ եմ առանց քննելու պարսավողների բամբասանքներն էլ ընդունել և նրանցը նույնպես, որ տեղին կլինեն և չեն ուզենա զերծ մնալ (քննելուց)»[1]։

Ինչպես արդեն նշվել է, «Դատաստանագրքի» առանցքային գաղափարը Հայաստանի ինքնիշխանության վերահաստատումն է։ Հայ կրոնական մտածողի աշխատությունում ամփոփված այդ գաղափար–տեսլականի իրականացման նախադրյալներից անհրաժեշտ է շեշտադրել հետևյալը։

[1] Նույն տեղում, էջ 399։

Ըստ Մխիթար Գոշի՝ հայ հասարակության մեջ պետք է հաստատվի Օրենքի գերակայությունը («զի օրէնք է եւ պահէլի») ինչը նրա կողմից դիտարկվում է որպես մարդկային, ազգային և հասարակական կյանքի կարգավորման, ազգի միավորման ու արդարության հիմքի վրա սոցիալական հարաբերությունների ներդաշնակեցման կարևորագույն միջոց։

Ազգային կեցության բոլոր ոլորտներում Օրենքի գերակայության հրամայականը չի բացառում ժամանակի ընթացքում զանազան հանգամանքներով պայմանավորված նույն Օրենքի փոփոխության ու լրամշակման հնարավորությունը։ Բոլոր դեպքերում Մխիթար Գոշը անհրաժեշտ է համարում հայ ազգային հասարակության շրջանակներում կիրառել միմիայն սեփական (ազգային) Օրենսգիրքը, ինչը նա պայմանավորում է երկու հանգամանքով.

1. «Հավատացյալները» (տվյալ դեպքում՝ հայերը) չեն կարող իրեց կենսակերպը համակարգել ըստ «անհավատների» օրենքների. «Բոլորին է հայտնի հավատացյալի տարբերությունը անհավատից. ինչպես առաքյալն է ասում՝ «Ի՞նչ ընդհանրություն ունի լույսը խավարի հետ», և կամ՝ «Ինչ բաժին ունի հավատացյալն անհավատի հետ», և այսպիսի այլ խոսքեր։ Ասվածից տեսնում ենք, որ տարբերությունն անսահման է և ծանոթ օրինակով հայտնվում է հաղորդակցման անհնարինությունը, և (ըստ այդմ) անհավատը կոչվում է երբեմն «որդի բարկության», և երբեմն՝ «(որդի) խավարի», Տիրոջ ասածից ելնելով. «Ով չհավատա Աստծո որդուն, նրա վրա կմնա Աստծո բարկությունը», և դարձյալ՝ «Եթե մեկը ջրից ու հողից չծնվի՝ Աստծո առքայությունը չի տեսնի»[1]։

2. Քրիստոնեական աշխարհըմբռնում որդեգրած հայը չի կարող ապավինել նաև մուսուլմանական իրավունքին. «...թեև այժմ մահմեդականները Աստծուն Հայր են խոստովանում, սակայն Որդուն արարված ասելով՝ նույնանում են հեթանոսներին և նրանց հետ են դասվում ճշմարիտ իմացողների կողմից։ Եւ որ հավատացյալները

[1] Նույն տեղում, էջ 383։

չպետք է նրանց դատաստանով շարժվեն՝ հայտնի է առաքյալից… Նրանք (մահմեդականները) դատը վարում են ըստ իրենց կրոնի: Թեև օրենքների հիմքում Մովսեսին ունեն՝ շատ կեղծիքներով աղավաղում և իրենց ցանկացած ձևով են վերցնում (օրենքը)»[1]: Մխիթար Գոշը հատուկ շեշտադրում է քրիստոնեական կրոնին և քրիստոնեական առաքինություններին հայերի նվիրվածության պահպանման անհրաժեշտությունը. «Եւ քանի որ այսքան տարբերություն կա դատաստանի մեջ՝ քրիստոնյային արժանի չէ նրանց դատարանին դիմել, իսկ եթե հանդգնի՝ բազում չար գայթակղությունների պատճառ կդառնա մեր և մեր օրենքների մեջ. մեր մեջ՝ որ իսպառ տգետ կամ բազմապիսի ախտերով է լեցուն, օրենքների մեջ՝ որ ոչ թէ ճշմարտությամբ է ուսուցանում, այլ խաբեությամբ և խեղաթյուրելով… Հավատացյալներին արժան չէ ագահության և դատը շահելու համար գնալ անհավատների մոտ, այլ (արժան է գնալ) հավատացյալների մոտ, թեկուզ և արդարությամբ զրկվի, քանզի դատաստանի իրավացին ընդունելով՝ կգիտենա, որ կյանքի կարժանանա Քրիստոսի կողմից»[2]:

Ակնհայտ է, որ մտածողի վերոհիշյալ հիմնադրույթները ուղղված էին ազգային պետականության չգոյության պայմաններում հայ ազգի ներկայացուցիչների հոգեբարոյական մակարդակի ու իրավագիտակցության զարգացմանը, դրանով իսկ նաև հայ ազգային ինքնատիպության պահպանմանը: Գաղափարախոսական այս գիծը համընդգրկող էր հայ ազգային մշակույթի ինքնագիտակցության համար հայ ազգի՝ որպես քրիստոնյա ազգի, ողջ պատմության ընթացքում[3]:

Նշված հանգամանքը համահարաբերական է դատավորների ու թագավորների գործունեության կանոնակարգերի Մխիթար Գոշի սահմանմանը: Դատավորների գործունեության գնահատման

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] Դրա մասին տե՛ս, օրինակ՝ **Мирумян Р.А**. Национальный язык как первооснова культурной идентичности нации (политико-философский аспект) // Вестник Российско-Армянского (Славянского) университета (серия: гуманитарные и общественные науки), Ер. , 2016, С.47- 62: Տե՛ս **Мирумян Р.А**., Духовное возрождение нации как фактор сохранения армянской национальной идентичности в политической доктрине Мхитара Себастаци (к вопросу о политической концепции культуры) // Вестник Российско- Армянского (Славянского) университета (серия: гуманитарные и общественные науки), Ер. , 2017, С. 82-99.

չափորոշիչը նրանց պատիվն է (հոգեբարոյական արժեհամակարգ)։ Մինչդեռ թագավորի (ազգի առաջնորդի) գործունեության գնահատման չափորոշիչը նրա ինքնիշխան լինելն է (քաղաքական արժեհամակարգ). «Թագավորներ անվանվում են նրանք, ովքեր տիրում են իրենց ամբողջ ազգին և այլևայլ հարկեր են գանձում նրանից, իսկ եթե ոչ, ապա՝ (իրենք) չեն հարկադրվում»[1]։ Օրենքով գործելու Մխիթար Գոշի պատվիրանը վերաբերում է նաև թագավորին. «Ամեն պարագայում և ամեն գործի մեջ իրավունքով (թող) վարվի հավատացյալ թագավորը»[2]։ Դա միաժամանակ ենթադրում է թագավորի կողմից ազգային հասարակության բոլոր խավերի նկատմամբ արդարության, գթասիրության ու հոգատարության դրսևորում։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հանցագործության համար նախատեսված պատիժը Մխիթար Գոշը համարում է մարդուն ուղղելու միջոց։ Հաստատելով «պատիժ/ուղղում» սկզբունքը, մտածողը, ըստ էության, հրաժարվում է Մովսեսի Օրենքի մեջ ամրագրված և քրիստոնեության կողմից որդեգրված «պատիժ/ հատուցում» սկզբունքից՝ պարտ ու պատշաճը հատուցելով դեռևս անտիկ դարաշրջանում (Պլատոն, Արիստոտել, հելենիստական շրջան) ծնունդ առած այդ սկզբունքին։

Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց» աշխատությունը հայ ազգի առկա կեցության ու նրա պատմական ճակատագրի յուրահատուկ ըմբռնում է, որի հիման վրա ստեղծվել է հայոց պետականության (Կիլիկյան Հայաստան) ամրապնդման ու պահպանման գաղափարը ամրագրող Սմբատ Սպարապետի (Գունդստաբլի) «Դատաստա-նագիրքը» (XII դար)։

---

[1] **Գոշ Մխիթար**, Դատաստանագիրք Հայոց, էջ 392։

[2] Նույն տեղում, էջ 394։

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում հիմնավորվում է այն միտքը, որ հայ միջնադարյան մշակույթի (XII դարի) մեծագույն հուշարձանը՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»–ը հանդիսանում է տվյալ ժամանակաշրջանի հայ ազգի գոյության (քաղաքական և իրավական հարթությունում) և նրա անցյալը (պատմամշակութային հարթությունում) մասին ռեֆլեկսիա:

Հեղինակը պարզել է, որ միջնադարյան հայ մտածողի հիմնարար աշխատության մեջ «գործում է» մեթոդաբանական հետևյալ սկզբունքը՝ ազգի իրավական մշակույթի զարգացումն ուղիղ համեմատական է նրա հոգևոր, բարոյական և մտավոր զարգացման մակարդակին:

Բանալի բառեր՝ հայ պատմափիլիսոփայություն, ազգի իրավական մշակույթ, ազգի քաղաքական մշակույթ, ազգի իրավագիտակցություն, ազգի քաղաքական ապագայի նախագիծ, ազգային ինքնագիտակցության վերածնունդ, ազգի քաղաքական ազատություն, ազգի հոգևոր ազատություն, օրենքը որպես սոցիալական ներդաշնակության գրավական, ազգային ինքնատիպություն:

ВОСПРИЯТИЕ ЗАКОНА В ФИЛОСОФСКОМ МИРОВОЗЗРЕНИИ МХИТАРА ГОША

Римма Мирумян

Доктор философских наук, профессор,
ведущий научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

В статье постулируется и обосновывается идея о том, что величайший памятник средневековой армянской культуры (XII век) - «Судебник» Мхитара Гоша является рефлексией над бытием армянской нации указанного периода (в политико-правовой плоскости) и ее прошлым (в историко-культурной плоскости).

Автором выявлено, что в фундаментальном труде средневекового армянского мыслителя «работает» следуюший методологический принцип: развитие правовой культуры нации прямо пропорционально уровню ее духовно-нравственного и интеллектуального развития.

«Судебник» Мхитара Гоша автор статьи характеризует как мощную основу духовного объединения и нравственно-интеллектуального развития армянской нации, что, в свою очередь, должно способствовать духовному возрождению нации и стать гарантом восстановления в исторической перспективе армянской национальной государственности. В силу этого труд Мхитара Гоша автором статьи правомерно определяется как имеющее философско-историческую направленность исследование, а именно: проектирующий политическое будущее армянской нации труд. Стержневой идеей монументального труда Мхитара Гоша автор статьи называет идею восстановления суверенитета армянского национального государства. Предпосылками реализации этой идеи являются следующие положения мировоззрения армянского средневекового мыслителя:

1.Наличие Закона - главного средства регулирования социальной жизни и обеспечения социальной гармонии в армянском обществе.

2.Приверженность представителей армянской нации к религии и христианским добродетелям - гарантия их национальной самобытности.

3.Способность армянской нации иметь свой Судебник. Законы армянской нации как нации христианской основаны на содержавшемся в Св. Книге божественном законе - интуитивно известному каждому человеку естественном законе, чувстве христианского сострадания, что, по сравнению с писаным законом, более точно регулирует отношения между людьми, а также обычном праве.

На основе отраженного в «Судебнике» Мхитара Гоша восприятия наличного бытия армянской нации и ее исторической судьбы в следующем - XII веке, был создан «Судебник» Смбата Спарапета (Гундстабля), центральной идеей которого является идея укрепления и сохранения армянской государственности в Киликийской Армении.

Ключевые слова: армянская историософия, правовая культура нации, политическая культура нации, правосознание нации, проект политического будущего нации, возрождение национального самосознания, политическая свобода нации, духовная свобода нации, закон как гарант социальной гармонии, национальная самобытность

PERCEPTION OF THE LAW IN THE PHILOSOPHICAL WORLDVIEW OF MKHITAR GOSH

Rimma Mirumyan
Doctor of Philosophical Sciences, Professor,
Leading Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

The article postulates and substantiates the idea that the greatest memorandum of medieval Armenian culture (XIIth century) - «Datastanagirk» by Mkhitar Gosh is a reflection on the existence of the Armenian nation of the specified period (in the political and legal platform) and its past (in the historical and cultural platform). The author revealed that the following methodological principle «works» in the fundamental work of the medieval Armenian thinker: the development of the legal culture of a nation is directly proportional to the level of its spiritual, moral and intellectual development.

The author of the article characterizes the «Datastanagirk» of Mkhitar Gosh as a powerful basis for the spiritual unification and moral and intellectual development of the Armenian nation, which, in turn, should contribute to the spiritual revival of the nation and become the guarantee of the restoration of the Armenian national statehood in the historical perspective. The article is rightfully defined as a research that has a philosophical and historical orientation, namely, a work projecting the political future of the Armenian nation. The author of the article calls the idea of restoring the sovereignty of the Armenian national state as the core

idea of the work of Mkhitar Gosh. The prerequisites for the implementation of this idea are the following provisions of the worldview of the Armenian medieval thinker:

1. The presence of the Law - the main means of regulating social life and ensuring social harmony in the Armenian society.

2.The commitment of the representatives of the Armenian nation to religion and Christian virtues - guarantee of their national identity

3. The ability of the Armenian nation to have its own Datastanagirk. The laws of the Armenian nation as a Christian nation are based on the divine law contained in the Holy Book - the natural law intuitively known to every person, the feeling of Christian compassion, which, in comparison with the written law, more accurately regulates relations between people, as well as customary law.

Based on the perception of the present existence of the Armenian nation and its historical fate in the next – XIIth century, under the inspiration of Mkhitar Gosh's «Datastanagirk», Smbat Sparapet (Gundstable) created «Datastanagirk», the central idea of which is the idea of strengthening and preserving the Armenian statehood in Cilician Armenia.

Keywords: Armenian historiosophy , legal culture of the nation, political culture of the nation, legal consciousness of the nation, project of the political future of the nation, revival of national identity, political freedom of the nation, spiritual freedom of the nation, law as a guaranty of social harmony, national identity.